Պարունակում է մրցութային գաղտնիք

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. ապրիլի 20-ին ժամը 15.00-ին
կայացած հերթական նիստի

**Նիստը նախագահում էր.**

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

**Մասնակցում էին՝**

**Կառավարման խորհրդի անդամներ.**

| | |
|---|---|
| Վահրամ Ներսիսյանցը | ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական |
| Վարդան Խաչատրյանը | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար |
| Դավիթ Լոքյանը | ՀՀ գյուղատնտեսության նախարար |
| Անդրանիկ Մանուկյանը | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Նազելի Վարդանյանը | «Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ նախագահ |
| Կարեն Նազարյանը | «Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի նախագահ |
| Տոնական Ղազարյանը | Շենիկ ՋՕԸ |
| Վանիկ Սողոմոնյանը | Ֆերմերների ազգային միավորում ՀԿ |
| Վարդան Համբարձումյանը | «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն |

**Նիստին հրավիրված էր.**

| | |
|---|---|
| Անդրանիկ Անդրեասյանը | ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ |
| Դավիթ Ավետիսյանը | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ |

**Նիստին մասնակցում էին նաև.**

| | |
|---|---|
| Արա Հովսեփյանը | «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն |
| Ռուզաննա Ղազարյանը | «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար |
| Ալեքս Ռասինը | Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն |
| Էդիթ Պետրոսյանը | Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի օգնական |
| Սիմոն Ղոնախչյանը | ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ |
| Հովհաննես Սահակյանը | ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ, |
| Մերի Հարությունյանը | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ |

**Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.**

1. «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրության» մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
2. «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկման խորհրդատվական ծառայությունների մատուցման հայտ ներկայացրած կազմակերպությունների կարճ ցուցակի կազմման արդյունքների, գնահատող հանձնաժողովի կազմի և մրցույթին հայտ ներկայացնելու հրավերի քննարկում և հաստատում:
3. «Հազարամյակի Մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» ՊՈԱԿ-ի Գնումների ղեկավարի ընտրության մրցույթի արդյունքների քննարկում և հաստատում:
4. Այլ հարցեր:

**Նիստի ընթացքում.**

**Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրության» մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքները:

**Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ձայների մեծամասնությամբ (***9 կողմ/1 դեմ հարաբերակցությամբ)* **որոշվեց՝** հաստատել «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկման խորհրդատվական ծառայությունների մատուցման հայտ ներկայացրած կազմակերպությունների կարճ ցուցակի կազմման արդյունքները, գնահատող հանձնաժողովի կազմը և մրցույթին հայտ ներկայացնելու հրավերի տեքստը:

Սույն հարցի 1-ին մասի առնչությամբ կառավարման խորհրդի անդամ Ն. Վարդանյանը հայտնեց իր առարկությունը, որը որպես Հատուկ կարծիք ներկայացվել է վերջինիս կողմից և կցվում է սույն արձանագրությանը:

**Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ քննարկվեց** «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Գնումների ղեկավարի ընտրության ներկայացված թեկնածուների կարճ ցուցակը և որոշվեց այդ պաշտոնին ընտրել ՀՄՀ-Հայաստան ծրագրի գնումների ղեկավարի պաշտոնակատար՝ Ռուդոլֆ Պետրոսյանին:

**Օրակարգի 4-րդ կետում ներառված հարցի** առնչությամբ՝ քննարկվեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի ֆինանսական գործակալի հարցը */տեքստը՝ գաղտնիության պահպանման նկատառումով՝ չի հրապարակվում/:*

**Օրակարգի հարցերի սպառումից հետո** Կառավարման Խորհրդի անդամ Կարեն Նազարյանը հայտնեց իր մտահոգությունը հանրապետությունում ԱՄՆ դոլարի արժեզրկման հետևանքով ծրագրով նախատեսված աշխատանքների, հատկապես՝ շինարարական աշխատանքների, իրականացման համար կատարվելիք գնումների ժամանակ, ի վնաս կատարվելիք գնումների և/կամ աշխատանքների քանակի կամ ծավալի՝ առաջանալիք հնարավոր գնային տարբերության վերաբերյալ:

Մտահոգությունը կիսվեց Խորհրդի անդամների կողմից, սակայն, միաժամանակ որոշվեց, որ այդ հարցին կանդրադառնան ըստ համապատասխան աշխատանքների/գնումների կատարման ժամանակի և ըստ իրադրության կկարգավորեն յուրաքանչյուր ծառացած խնդիր: Բացի այդ, ինչպես նշվեց Կառավարման խորհրդի մի շարք անդամների կողմից՝ այդ խնդրի լուծման նպատակով հնարավոր է, որ օգտագործվեն ֆինանսական այլընտրանքային միջոցներ:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու
Ռ. Ղազարյանը